ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ 214

21 նոյեմբերի 2001 թ.

ԱՄՆ հայկական լոբբին այդչափ հզոր ուժ չէ

«ԱՄՆ հայկական լոբբին իրենից չի ներկայացնում այն հզոր ուժը, որի մասին անընդհատ տարփողվում է:
Իրականությունն այն է, որ հայկական լոբբին բավական սահմանափակ հնարավորություններ ունի, իսկ լոբբիստական կազմակերպություններից մեկն էլ՝ Ամերիկայի հայկական համագումարը, բացահայտորեն դարձել է ամերիկյան արտաքին քաղաքականության կցորդը»,- համոզված է Արմեն Այվազյանը:

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ 214

Պետք չէ ոգևորվել սուտ խոստումներից

Հարցազրույց Արմեն Այվազյանի հետ

Արմեն Հակոբյան

-Ազատության աջակցության օրենքի 907 հոդվածը մեկ տարով կասեցնելու ԱՄՆ-ի Կոնգրեսի որոշումը Հայաստանի համար պարտությո՞ւն էր, թե՞ ոչ:

-Իհարկե պարտություն էր: Որոշման վերջնական տեսքով 907 հոդվածը կասեցվեց մեկ տարի ժամկետով: Մեկ տարի անց այն վերանայվելու է: Բայց չնչին հավանականություն կա, որ 907 հոդվածը կարող է ողջ ուժով կիրառվել: Գրեթե բացառվում է դա: Կասեցման որոշման մեջ մի փոքր բարելավում մտցվեց: Այն է՝ Ադրբեջանին ցուցաբերվելիք ամերիկյան ռազմական օգնությունը չի կարող կիրառվել Հարավային Կովկասի հայ համայնքների դեմ ագրեսիվ նպատակներով /Լեռնային Ղարաբաղ արտահայտությունը չօգտագործեցին, քանի որ ԱՄՆ պետդեպարտամենտը կտրուկ դեմ էր/:

Հայկական լոբբիստական կազմակերպություններն էլ նշեցին, թե բավարարված են դրանով: Նույնիսկ ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահն ասաց, թե Հայաստանը բավարարված է այդ հավելումով:
Այս կարգի հայտարարությունների հետ չի կարելի համաձայնել, որովհետև նախ՝ դա փոքր հավելում է, որն իրական կյանքում որևէ նշանակություն չի ունենալու: Չկան վերահսկման մեխանիզմներ, թե ինչպես է օգտագործվելու ամերիկյան ռազմական օգնությունը: Չեն էլ կարող լինել նման մեխանիզմներ: Որովհետև այդ ռազմական օգնությունը, ասենք 50 մլն դոլար, կարող է տրամադրվել ադրբեջանական ռազմական օդանավակայանների կամ նավատորմի հզորացմանը: Իսկ դա նշանակում է՝ Ադրբեջանն իր բյուջեի այն 50 միլիոնը, որ պիտի տրամադրեր այդ ծախսերին, ուղղելու է մեր դեմ: Այսքան բան: Այսինքն՝ ԱՄՆ կողմից Ադրբեջանին ցուցաբերելիք ռազմական օգնությունը հայ համայնքների դեմ չուղղելու պայմանն անհեթեթ է: Եվ միջազգային իրավունքի տեսության տերմիններից օգտվելով, կարելի է ասել՝ դա սուտ խոստում է: Պետք չէ ոգևորվել այդպիսի սուտ խոստումներից: Իրականում 907-ի կասեցումը մեզ համար պարտություն է: Դրա հետևանքները դեռ չգիտենք ինչպիսին կլինեն, բայց դրանք կարող են լինել շատ ծանր: Հետևաբար չարժե փորձել լավ տրամադրություն ստեղծել վատ խաղի պայմաններում:

-Իսկ 907 հոդվածի կասեցման որոշումը կարո՞ղ է անդրադառնալ Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացի վրա:

-Մասամբ՝ այո: Եվ նախագահ Ռ.Քոչարյանի հոկտեմբերի 9-ի նամակում էլ այդ մասին պարզ ասված է: Մասնավորապես, որ 907 հոդվածը հակամարտության սկզբից կապված է եղել կարգավորման ընթացքի հետ: Այդ հոդվածը մեկ տարով կասեցնելը բացասաբար է անդրադառնալու կարգավորման գործընթացի վրա: Եվ բացասական է լինելու մեզ համար:
Այդ հոդվածը ներառվում էր կարգավորման գործընթացի մեջ այնքանով, որ Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հանդեպ կիրառվող շրջափակումը վերացնելու պահանջ էր դրվում: Մինչդեռ շրջափակումը չի վերացվել, բայց 907-ի հիշյալ պահանջը կասեցվել է:

-Այսինքն՝ ԱՄՆ-ը նաև ա՞յդ եղանակով է ջանում հայերիս ոչ ձեռնտու համաձայնություն պարտադրել:

-Չգիտեմ, թե դա ինչպե՞ս կարելի է մեկնաբանել. որպես ճնշում հայկական կողմի վրա՞, թե՞ խրախուսում ադրբեջանական կողմին: Եվ 907-ի կասեցումը կարող է ռազմական ճանապարհով Ղարաբաղյան հարցը լուծելու ինչ-որ նախադրյալ լինել, որովհետև խոսքը Ադրբեջանին ամերիկյան ռազմական օգնություն ցուցաբերելու մասին է:
Պատահական չէ, որ ԱՄՆ պետդեպարտամենտը կտրուկ դեմ էր, որ կասեցման մեջ մտցվեր «ռազմական օգնությունը Լեռնային Ղարաբաղի դեմ չկիրառելու» պահանջը հենց այդ ձևակերպմամբ: Եվ չպետք է մոռանալ, որ 907 հոդվածի կասեցումից հետո ԱՄՆ-ի հենց գործադիր իշխանությունն է ստանում ազատ գործելու հնարավորություն, իսկ Կոնգրեսի վերահսկողությունը հասցվում է նվազագույնի:
Ուղղակի պետք է հետևենք, տեսնենք, թե Ադրբեջանին ցուցաբերվելիք այդ օգնությունն ինչ չափեր և ձևեր է ընդունում, և ըստ այդմ՝ պարզ կլինի մնացյալը: